

ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ (12.09.2016-08.12.2016) ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ ՈՒ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-ԻՆ ԳՈՒՄԱՐՎԱԾ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հինգերորդ գումարման տասներորդ նստաշրջանի ընթացքում գումարվել է 5 չորսօրյա և 5 արտահերթ նիստ՝ 3-ը ՀՀ կառավարության նախաձեռնությամբ, 2-ը՝ ԱԺ պատգամավորների: Հերթական նստաշրջանի ավարտից հետո գումարվել է 2 արտահերթ նստաշրջան՝ ՀՀ կառավարության նախաձեռնությամբ:

Նստաշրջանի սկզբում հաստատված օրակարգում ընդգրկված էր 168 հարց, որից 103-ը ՀՀ կառավարության նախաձեռնություններ էին, 60-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորների, իսկ 5-ը պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող հարցեր էին: Օրակարգի միջազգային պայմանագրերի վավերացման մասին բաժինն ընդգրկում էր 33 միջազգային պայմանագիր:

Վետագայում նստաշրջանի օրակարգը լրացվեց ևս 27 հարցով, այդ թվում՝ 19-ը ՀՀ կառավարության նախաձեռնություն (6-ը անհետաձգելի), 3-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորական նախաձեռնություն (1-ը ԱԺ որոշման նախագիծ) և 6-ը՝ պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող այլ հարցեր: Օրակարգը լրացվել է նաև 14 միջազգային պայմանագրով: Նստաշրջանի օրակարգի՝ կառավարության նախաձեռնությամբ լրացումների մեջ էր նաև «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Աշնանային նստաշրջանի ավարտից հետո՝ արտահերթ նստաշրջանների ընթացքում օրակարգը լրացվեց ևս 9 օրենսդրական նախաձեռնությամբ (բոլորն էլ ՀՀ կառավարության) և 3 միջազգային պայմանագրով:

Նստաշրջանի օրակարգում ընդգրկված 254 հարցերից (ներառյալ միջազգային պայմանագրերը) 195-ը օրենքների նախագծեր կամ նախագծերի փաթեթներ էին, որոնցից աշնանային նստաշրջանի, դրա ընթացքում գումարված արտահերթ նիստերի և աշնանային նստաշրջանից հետո գումարված արտահերթ նստաշրջանների ընթացքում քննարկվել և ամբողջությամբ ընդունվել են 60-ը (24-ը արտահերթ նստաշրջանների ընթացքում), որոնցից 57-ը՝ ՀՀ կառավարության (12-ը կառավարության որոշմամբ՝ անհետաձգելի), 1-ը կառավարության և ԱԺ պատգամավորների համատեղ, իսկ 2-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորների նախաձեռնած նախագծեր էին (2-ն էլ ընդունվեցին արտահերթ նստաշրջանի ընթացքում): Միջազգային պայմանագրերից զատ քննարկվել է 6 պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող հարց: Ամբողջությամբ ընդունված 60 օրենքներից կամ օրենքի նախագծերի փաթեթներից 9-ը մայր օրենքներ են, որոնցից 7-ը ՀՀ կառավարության նախաձեռնություններն էին, իսկ 2-ը՝ ԱԺ պատգամավորներինը:

Ընդունված նախագծերից 3-ը սահմանադրական օրենքներ էին («Ազգային ժողովի կանոնակարգ», «Կուսակցությունների մասին», «Մարդու իրավունքների պաշտպանի մասին»), իսկ մեկի՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը պայմանավորված էր Հայաստանի Հանրապետության Սահմանադրական փոփոխություններով: Ուշագրավ էր նաև «Ֆինանսական համահարթեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը, որով նախատեսվում է պետական բյուջեից համայնքներին համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների բաշխման նոր մեխանիզմ՝ բնակչության թվից առավելապես կախված բաշխումից անցում է կատարվում բազմագործոն բաշխման, լրացուցիչ հաշվի առնելով համայնքների տրանսպորտային հասանելիությունը (մարզկենտրոն, Երևան), բարձրադիրությունը, համայնքում ընդգրկված բնակավայրերի քանակը, բնակչության տարիքային կազմը, մասշտաբի էֆեկտը: «Տեղական տուրքերի և

վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման արդյունքում հստակորեն սահմանվեց և տարանջատվեց «տեղական տուրքեր» և «տեղական վճարներ» հասկացությունները, միատեսակ մոտեցում ցուցաբերվեց տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրանց դրույքաչափերը սահմանելիս, ինչպես նաև և հստակեցվեց տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններն այդ հարցում:

Հիշատակության է արժանի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի և «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը:

Ընդունված օրենքներից 12-ը ուղղված էին բիզնես գործունեություն ծավալելու պայմանների բարելավմանն ու առկա խնդիրների վերացմանը, համապատասխան ոլորտի կարգավորող իրավական ակտերի կրճատմանն ու պարզեցմանը, մասնավորապես, դրանցով սահմանված տնտեսապես ոչ արդյունավետ և աննպատակահարմար մեխանիզմների կրճատմանը, նոր կարգավորումների հետ կապված տնտեսվարող սուբյեկտների մոտ առաջացող ծախսերի կրճատմանը: «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսվում է ռեդոմիցիլացման հայկական ինստիտուտի ներդրումով Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա իրավաբանական անձանց և նրանց կապիտալի ներհոսք, լրացուցիչ աշխատատեղերի ստեղծում, տնտեսության և կազմակերպարավական ոլորտի զարգացում: «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսվում է կանխարգելի ֆինանսական բուրգերի կազմակերպումը, դրա ղեկավարումը և դրանում անձանց ներգրավումը, ինչը հնարավորություն կտա խուսափել ֆինանսական բուրգերի

գործունեության արդյունքում առաջացող բացասական հետևանքներից:

«Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ներդրվեց նոտարների կողմից մեկ պատուհանի սկզբունքով ծառայությունների մատուցումը և էլեկտրոնային նոտարի համակարգը, «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում նախատեսել կոռուպցիայի դեմ պայքարում կարևորագույն գործիք հանդիսացող ապօրինի հարստացման հանցակազմը, իսկ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունմամբ ակնկալվում է Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի օրենսդրության արդյունավետ գործիքակազմի ապահովումը, կոռուպցիոն տեսանկյունից ռիսկային համարվող սուբյեկտների և գործարքների վերահսկողությունը, ստվերային դրամաշրջանառության էական նվազեցումը, ինչպես նաև հարկերից չարամտորեն խուսափելու դեպքերի բացահայտման և քննման առավել մեծ հավանականությունը: Կարելի է ընդգծել նաև «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի ընդունումը:

ԵՎ վերջապես՝ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը, որով առաջարկվում է հատուցման գումարներ վճարել այն զինծառայողներին, որոնք մահացել կամ հաշմանդամություն են ստացել մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ: ԱԺ-ն նաև քննարկեց և քվեարկությամբ

մերժեց ԱԺ պատգամավորների նախաձեռնած 2 օրենքի նախագծի՝ ՀՀ ԱԺ նստաշրջանի օրակարգ ընդգրկելու մասին հարցը:

Նստաշրջանի ընթացքում՝

- քննարկվեց և 85 կողմ, 7 դեմ, 6 ձեռնպահ ձայներով հավանություն տրվեց ՀՀ կառավարության ծրագրին.
- քննարկվեց և 83 կողմ, 24 դեմ, 1 ձեռնպահ ձայներով ընդունվեց «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը.
- փակ, գաղտնի քվեարկությամբ 97 կողմ, 3 դեմ ձայներով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ նշանակվեց Արթուր Դավթյանը.
- փակ գաղտնի քվեարկությամբ՝ 96 կողմ, 4 դեմ ձայներով Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի նախագահ ընտրվեց Տիգրան Մուկուչյանը, ինչպես նաև ընտրվեցին Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի 6 անդամներ.
- 71 կողմ, 10 դեմ, 19 ձեռնպահ ձայներով ընդունեց «Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի կատարման 2015 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը.

Քննարկվեց և ընդունվեց ի գիտություն՝

- Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի գործունեության ծրագիրը.

Նստաշրջանի ընթացքում ԱԺ պատգամավորները ՀՀ կառավարությանը դիմել են 16 գրավոր, որոնցից ՀՀ ԱԺ նիստերի ընթացքում հնչել է 7-ը և 63 բանավոր հարցով: Հնչել է 97 պատգամավորական հայտարարություն, որոնցից 33-ը վերաբերում էր գործադիրի գործունեությանը:

Նստաշրջանների ընթացքում վավերացվեց 28 միջազգային պայմանագիր: Այդ թվում՝ «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում բժշկական արտադրատեսակների (բժշկական նշանակության

արտադրատեսակների և բժշկական տեխնիկայի) շրջանառության միասնական սկզբունքների և կանոնների մասին» 2014 թվականի դեկտեմբերի 23-ի համաձայնագրին միանալու մասին» համաձայնագիրը, Սերբիայի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Շվեդիայի Թագավորության, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության, Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Հնդկաստանի Հանրապետության հետ եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին համաձայնագրեր, ինչպես նաև չորս վարկային համաձայնագրեր՝ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի, Ասիական զարգացման բանկի և Զարգացման Ֆրանսիական գործակալության հետ: